ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԵԴԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու

ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել թարգմանիչների պատրաստման բնագավառն ու խնդիրները թարգմանաբանության՝ որպես գիտակարգի, համակարգում: Քննարկվում են մասնագիտական այն հատկանիշները, որոնք հստակեցնում են թարգմանչի և ընթերցողի, թարգմանչի ու լեզվաբանի ընդհանրություններն ու տարբերությունները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. թարգմանաբանություն, թարգմանիչների պատրաստում, թարգմանությունը, որպես գործընթաց, թարգմանությունը որպես արդյունք, վստահելիություն:

«Թարգմանաբանություն» տերմինը առաջին անգամ կիրառել է Ա. Լեֆևեն 20-րդ դարակեսերին: Սակայն գիտական շրջանակներում այն լայն շրջանառության մեջ դրվեց ավելի ուշ՝ Ջեյմս Հոլմսի կողմից [4, 172]: Վերջինս գիտակարգի անվանման իր նախընտրությունը հիմնավորում էր այն հանգամանքով, որ մինչ այդ եղած բոլոր տարբերակները սահմանափակում էին ոլորտի ուսումնասիրության և գործունեության շրջանակները: Նա մատնանշում է, որ թարգմանական որոշ դպրոցներ նպատակահարմար են գտնում *թարգմանության տեսություն* անվանումը, սակայն, ըստ Հոլմսի, թարգմանության տեսության ոլորտն անբաժանելի է գործնական թարգմանությունից, ուստի անհրաժեշտ էր ավելի ընդգրկուն անվանում: Իր տեսակետն ամրագրելու համար նա առաջարկում է թարգմանաբանության ճյուղերը ներմուծող գծապատկեր, որն ընդգրկում է թարգմանության գործընթացի ու արդյունքների *տեսականացման* և *փոխանցման* բոլոր փուլերը:



Ըստ Ջ. Հոլմսի՝ գիտակարգը կարելի է ներկայացնել երկու հիմնական ճյուղերով՝ *զուտ (“pure”) թարգմանական գործունեություն*, որի նպատակն է թարգմանության և թարգմանական գործընթացի տեսական ու նկարագրական ուսումնասիրությունը, և *կիրառական թարգմանաբանություն* (applied TS) [4, 173–174], որն ընդգրկում է թարգմանության քննադատությունը, թարգմանության պատմությունը, թարգմանաբանական գործիքակազմը, թարգմանական նյութի ընտրության քաղաքականությունն ու թարգմանիչների պատրաստումը: Վերջինս առանցքային և որոշիչ դեր ունի ներկայացված ամբողջության մեջ, քանի որ միայն որակյալ ու պրոֆեսիոնալ թարգմանիչների պարագայում է հնարավոր մյուս բոլոր ճյուղերի գոյությունն ու շարունակականությունը:

Թարգմանությունն իրականում երկու տարբեր նշանային համակարգերում երկու համարժեք հաղորդում է [5, 114]: Սակայն, մյուս կողմից՝ թարգմանությունը սոցիալական գործունեություն է, քանի որ այն իրականացնում է հաղորդակցումը տարբեր մարդկանց, տարբեր լեզվակիր ժողովուրդների միջև: Եվ հարկ է նշել, որ թարգմանությունն ինքնին ավելի հեշտ է տրվում թարգմանչին ու ավելի ընդունելի է լինում այն ժամանակ, երբ այն թարգմանչի կողմից ընկալվում է որպես «կամրջակ», անցուղի, որով իրականացվում է հաղորդակցումը: Սա իր հերթին ձևավորում է թարգմանության հիմնական գործառույթներից մեկը՝ ժողովուրդների, մշակույթների մերձեցում ու փոխհարստացում:

Թարգմանությունը նաև տեքստի *ընկալման* միջոց է, քանի որ շատ նրբություններ ու երանգներ, որոնք հնարավոր է վրիպեն պարզապես ընթերցելիս, կարող են ի հայտ գալ թարգմանության ընթացքում: 20-րդ դարի նվաճումներից մեկը հենց այն էր, որ հաշվի առնվեց թարգմանության երկակի բնույթը՝ *թարգմանությունը որպես գործընթաց* և *թարգմանությունը որպես արդյունք*. թարգմանություն երևույթը հետևաբար մարդկանց տարբեր խմբերի համար տարբեր բան է: Դիտանկյունը տվյալ պարագայում կարող է լինել *արտաքին*, այսինքն՝ ընթերցողի/ոչ թարգմանչի տեսանկյունից, և *ներքին*, այն է՝ թարգմանչի տեսանկյունից [6, 96]: Ոչ թարգմանչի համար թարգմանությունը ամենից առաջ տեքստ է, թարգմանչի համար՝ նախևառաջ գործունեություն: Տեքստը՝ որպես արդյունք. սա է ակնկալում ոչ թարգմանիչը: Գիտակարգի կայացման ընթացքում (20-րդ դարի կեսերին) թարգմանաբանական մոտեցումներում ուշադրության կենտրոնում հիմնականում թարգմանված տեքստն էր և այն պահանջները, որոնք ներկայացվում են թարգմանչին, այն է՝ *վստահելիություն*, որը ձեռք է բերվում բնագրի համարժեք փոխանցմամբ՝ տեքստի և դրա ընկալման հարթություններում: Թարգմանական շուկայի պահանջարկը ենթադրում է վստահելի թարգմանչի կողմից կատարված վստահելի թարգմանություն: Մյուս կողմից՝ թարգմանչի համար վստահելիությունը մասնագիտական արժանապատվության խնդիր է:

Թարգմանչի տեսանկունից՝ ներքին դիտանկյունից պատկերն այլ է. թարգմանչի համար թարգմանությունը, բացի տեքստ լինելուց, առաջին հերթին գործունեություն է, որը չի սահմանափակվում միայն տեքստով: Այսինքն՝ թարգմանությունը պահանջում է ոչ թե պարզապես սկզբնաղբյուր տեքստի ընթերցում, այլ խոր, բազմակողմանի, վերլուծական ընթերցում: Թարգմանչի մասնագիտական կարևորագույն հրամայականներից է անալիտիկ՝ վերլուծաբան ընթերցող լինելը: Ի տարբերություն շարքային ընթերցողի՝ նա մշտապես գտնվում է երկու կամ մի քանի լեզուների, հետևաբար՝ մշակույթների միջև: Թարգմանչի կայացման գործընթացում մեկ այլ կարևոր հանգամանք է *նախաթարգմանական հմտությունների*

զարգացումը՝ համակարգված աշխատանք թարգմանվող տեքստերի հետ՝ համապատասխան մասնագիտական և գլոբալ համատեքստերում: Նա պետք է ունենա բազմակողմանի, հիմնարար և խորքային գիտելիքներ ոչ միայն թարգմանության բուն գործընթացի, այլև այն բնագավառի մասին, որից կատարում է թարգմանությունը: Այդ առումով կարևոր է սկսնակ թարգմանիչներին սովորեցնել ոչ թե որոշակի տեքստեր թարգմանել, այլ նրանցում ձևավորել որոշակի մոտեցում, աշխատանքային ոճ, որը նրան հնարավորություն կտա ընտրելու թարգմանական ճիշտ ռազմավարություն՝ հաշվի առնելով տեքստի տեսակը, ընթերցողի տեսակը և բնագրի հեղինակի միտումը: Ուստի պրոֆեսիոնալ թարգմանիչ դառնալու առաջնային պայմանն է ոչ միայն տեքստի վրա աշխատելով սովորել նոր բառեր, բառակապակցություններ, քերականական կառույցներ, այլև մշտապես հարստացնել գիտելիքները՝ ուսումնասիրելով լեզվակիր ժողովրդի մշակույթը, պատմությունը, հոգեբանությունը, կենցաղը և այլն: Ավելին, թարգմանիչը պետք է լինի իրազեկ թարգմանության պատմությանը, թարգմանության քննադատության և դրանց կիրառման մեթոդներին: Վերոնշյալ գիտելքների ճկուն ու գիտակից համադրումը վկայում է թարգմանչի պրոֆեսիոնալիզմի մասին: Անշուշտ, թարգմանիչը լեզուն առանձնակի խորությամբ ուսումնասիրող մասնագետ է, սակայն, ի տարբերություն լեզվաբան-բանասերի, որը լեզուն ուսումնասիրում է դրա ներուժը բացահայտելու համար, դրանից բացի, պետք է նույն այդ գիտելիքն օգտագործի լեզվական մեկ այլ համակարգում համարժեք արտահայտվելու համար: Ասել է թե՝ բանասերի համար լեզվի ուսումնասիրությունը *նպատակ* է, իսկ թարգմանչի համար՝ *միջոց*:

Ըստ 14-րդ դարի իտալացի հումանիստ, պետական գործիչ Լեոնարդո Բրունիի [3, 31]՝ թարգմանիչը պետք է ոչ միայն կատարելապես տիրապետի աշխատանքային լեզուներին, այլև խորապես ուսումնասիրի այդ լեզուներով ստեղծված մշակույթն ու դրանց անցած ուղին: Իսկ 20-րդ դարի ամերիկացի փիլիսոփա, նշանագիտության հիմնադիր Չարլզ Ս. Փիրսի կարծիքով՝ թարգմանությունը թարգմանչի համար գիտելիքների ձեռքբերման, կատարելագործման ու հետազոտությունների անընդհատ, շարունակական, պարուրաձև գործընթաց է, որն ընթանում է բնազդի, փորձառության և սովորութային փուլերով՝ կազմելով մի յուրահատուկ *փորձառության անիվ* [6, 98-99] Որքան արագ է պտտվում անիվը, այնքան մեծանում է թարգմանչի աշխատանքի արդյունավետությունը, և բարձրանում է որակը:

Այնուամենայնիվ, ի՞նչ է պահանջվում որակյալ, պրոֆեսիոնալ թարգմանիչ դառնալու համար, արդյոք կա՞ որևէ տարբերություն *թարգմանել կարողանալու* և *թարգմանիչ լինելու* միջև: Ո՞ր հմտություններն են, որ թարգմանչին հնարավորություն են տալիս ժամանակավորապես «դառնալու» բժիշկ, ինժեներ, բանաստեղծ և այլն: Արդյոք թարգմանիչները, ինչպես ժամանակակակից տեսաբան Դ. Ռոբինսոնն է ասում, «հաջողված դերասաննե՞ր են» [6, 27], որոնք ճկուն կերպափոխվում են: Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանները հավանաբար քիչ թե շատ կօգնեն ուրվագծելու թարգմանչի կերպարն ու այն պահանջները, որոնք առաջադրվում են պրոֆեսիոնալ թարգմանչին:

Նախ՝ թարգմանիչն առաջին հերթին անհատ է՝ իր պահանջներով, համոզմունքներով, հետաքրքրություններով, բարոյական չափանիշներով, զգացմունքներով, որոնք կարող են բախվել մասնագիտական նորմերին: Թարգմանիչը հաճախ ստիպված է լինում առնչվել այնպիսի նյութի, որի բովանդակությունը հակադրվում է իր սկզբունքներին, աշխարհայացքին, համոզմունքներին կամ դիրքորոշմանը:

Մյուս կողմից՝ թարգմանիչը սոցիալական էակ է և ոչ միայն այն պատճառով, որ նա մարդկային արարած է և հասարակության անդամ, այլ նաև իր գործունեությամբ ապահովում է հաղորդակցումը: Բազմաթիվ են տեսությունները (Polysystem, Skopos/Handlung և Postcolonial), որոնք առաջադրում են թարգմանության հենց սոցիալական նշանակության հարցը:

Ցավոք, մեզանում դեռևս կան մարդիկ, որոնց պատկերացմամբ՝ թարգմանիչ լինելու համար բավարար են լեզվական հմտությունները և այն, որ թարգմանությունն ընդամենը տվյալ լեզվի բառակազմի և քերականական կաղապարների իմացությունն է ու հարմարեցումը: Այս մոտեցումը, անտարակույս, անընդունելի է, քանի որ սահմանափակում է թարգմանչի մասնագիտական դերն ու առաքելությունը: Անշուշտ, թարգմանչի՝ որպես պասիվ միջնորդի, դիտարկումը նույնպես հանգեցնում է թարգմանչի ձևավորման հարցում որոշակի վերապահումների, քանի որ թարգմանիչը, միջնորդ լինելուց զատ, կայանում է ոչ միայն և ոչ այնքան զուտ կոնկրետ թարգմանության ընթացքում, այլև դրան նախորդող խորքային մասնագիտական կայացման միջոցով, որը պահանջում է մտավոր լրջմիտ լարում ու խորքային վերլուծական աշխատանք:

Ամփոփելով վերոբերյալը՝ նկատենք, որ թարգմանությունը մտավոր գործունեություն է, որն ընդգրկում է գիտակցված ու չգիտակցված բազմաշերտ վերլուծություն (իմաստային դաշտերի, շարահյուսական կառուցվածքների, ընթերցողի կամ ունկնդրի սոցիոլոգիայի և հոգեբանության, մշակութային տարբերությունների և այլն), պրպտումների բարդ գործընթացնեչ և պահանջում է ստեղծագործական մոտեցում՝ տեքստային, սոցիալական ու մշակութային խնդիրներ լուծելիս:

Ինչպես ցանկացած տեսություն, թարգմանաբանությունը ևս առաջարկում է մոդելներ, կառույցներ, տերմիններ, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են իրականությունը և անհրաժեշտաբար նպաստում թարգմանիչների պատրաստմանը: Սակայն դրանք միշտ ավելի սահմանափակ են, քան իրականության մեջ գոյություն ունեցող երևույթները: Այս իմաստով տեսությունը, այդ թվում և թարգմանության տեսությունը, կատարյալ լինել չի կարող: Այնումանայնիվ, չի կարելի թերագնահատել տեսության դերն ու նշանակությունը, քանի որ այն, տվյալ դեպքում՝ թարգմանության տեսությունը, ներառում է ոչ միայն թարգմանչի պարտականությունները, այլ նաև իրավունքները: Այս տեսակետից թարգմանության տեսությունը կատարում է պաշտպանողական գործառույթ յուրաքանչյուր թարգմանչի գործունեության մեջ՝ հարստացնելով նրա գիտելիքները, սովորեցնելով մտածել, դատողություններ անել, եզրահանգումների գալ, հետևաբար կատարելագործվել թարգմանչի դժվար ու պատասխանատու մասնագիտության մեջ: Դիտելի է, որ որքան էլ այս կամ այն տեսություն կամ մոտեցում կարող է անհեթեթ ու ոչ տեղին թվալ, դրանց նպատակային համադրումը հնարավորություն է տալիս ձևավորելու հակադիր տեսակետներ և գալու սեփական եզրահանգումների: Իսկ եզրահանգումները կազմում են տեսության հիմքը: Ուստի, ինչպես դարեր շարունակ ընդունված է եղել համարել, տեսությունն ու գործնական թարգմանությունն անբաժանելի են, քանի որ տեսական դրույթներն իրենց հաստատումը գտնում են գործնականում, իսկ վերջինս իր հերթին համակարգվում է տեսության միջոցով: Այսպիսով, թարգմանչի գործնական աշխատանքը հիմնվում է տեսական դրույթների վրա՝ հանգելով գործնական դիտարկումների վերլուծության տեսականացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Գաբրիելյան, Թարգմանությունը որպես բնագրի ընկալման, իմաստի հաղորդման և միջմշակութային հաղորդակցման միջոց, Կանթեղ 2(71), Երևան, 2017, էջ 3-9:
2. Ս. Գաբրիելյան, Ինչ ասել է թարգմանիչ, Աստղիկ 11, Երևան, 2001, էջ 38-43:
3. Bruni, L., 2002, On the Correct Way to Translate, in The Translation Studies Reader (ed. by S. Gabrielyan), Yerevan, Sahak Partev, pp 31-34.
4. Holmes, J., 2000, The Name and the Nature of Translation Studies, in The Translation Studies Reader (ed. by L. Venuti), London and New York, Routledge, pp. 172-185.
5. Jakobson, R., 2000, On Linguistic Aspects of Translation, , in The Translation Studies Reader (ed. by L. Venuti), London and New York, Routledge, p. 114.
6. Robinson, D., 1997, Becoming a Translator, an Accelerated Course, London and New York, Routledge, p. 6-7, 26-46, 96-100.
7. Routledge Encyclopedia of Translation Studies, 2001, (ed. by Mona Baker), London and New York, Routledge, 654p.

СПЕЦИФИКА ПОДГОТОВКИ ПЕРЕВОДЧИКА В СИСТЕМЕ ПРИОРИТЕТОВ ПЕРЕВОДОВЕДЕНИЯ

СЕДА ГАБРИЕЛЯН

Кандидат филологических наук, доцент кафедры теории и практики перевода, ЕГУ

Статья рассматривает некоторые фундаментальные особенности обучения и становления переводчика с точки зрения приоритетов Переводоведения. Представленные наблюдения являются попыткой обобщения основных отличий подготовки переводчика в системе филологического или сугубо лингвистического образования. Парадигма особых навыков и знаний рассматривается с позиций восприятия текста согласно совокупности знаний, навыков и компетенций.

SPECIFICITY OF TRANSLATOR TRAINING IN THE SYSTEM OF TRANSLATION STUDIES

SEDA GABRIELYAN

PhD, associate prof., Chair of Theory and Practice of Translation, YSU

The main objective of the article is to introduce the central role of translator training in the discipline of Translation Studies. The research is an attempt to generalize the main differences of translator training in the system of philological or linguistic education, to highlight features and skills peculiar to professional translators.